ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

ԵՋԷԿ-ԳՀԾՁԲ-19/142 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

Քաղ. Երևան «08» Հոկտեմբերի 2019թ.

2019թ-ի սեպտեմբերի 30-ից հոկտեմբերի 08-ը, «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի գրասենյակում՝ ք. Երևան, Արին-Բերդի 3-րդ նրբանցք, թիվ 3 հասցեում, տեղի ունեցավ **ԵՋԷԿ-ԳՀԾՁԲ-19/142** ծածկագրով */էլեկտրաէներգետիկական ոլորտի ֆինանսական առողջացման ծրագրի շրջանակում մասհանումներին կցված 8-րդ և 9-րդ ցուցանիշների ապահովման հավաստման ծառայությունների/* գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ հանձնաժողով) նիստը: Հանձնաժողովի նիստին մասնակցում էին հանձնաժողովի հետևյալ անդամները՝

Ա. Բաղդասարյան	«Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի ֆինանսական տնօրեն.
Ա. Սերոբյան	«Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի Ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ.
Շ. Տոնապետյան	«Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի ԱՏԲ-ի պետի տեղակալ.
Ա. Պետրոսյան	«Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի Մ և Գ բաժնի առաջատար մասնագետ գնումների գծով.

Հանձնաժողովի նիստին ներկա էր հանձնաժողովի քարտուղար Տիրան Լաճիկյանը՝ «Լաճ Գրուպ» ՍՊԸ ներկայացուցիչ:

Հաշվի առնելով, որ հանձնաժողովի կազմը բաղկացած է հինգ անդամից, իսկ հանձնաժողովի նիստին մասնակցում էին հանձնաժողովի չորս անդամները, հետևաբար՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 26-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն, հանձնաժողովի նիստը համարվեց իրավազոր և հայտարարվեց բացված:

Հանձնաժողովի նիստը նախագահում էր Ալիսա Բաղդասարյանը, իսկ քարտուղարն էր՝ Տիրան Լաճիկյանը:

ՕՐԱԿԱՐԳ

1. ԵՄԷԿ-ԳՀԾՁԲ-19/142 ծածկագրով գնման ընթացակարգին մասնակցելու հայտեր ներկայացրած անձանց, վերջիններիս կողմից ներկայացված հայտերի գնահատման և առաջարկված գների մասին:
2. Առաջին /և հաջորդաբար տեղեր/ զբաղեցրած մասնակիցներ որոշելու մասին:
3. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրվա և ժամի մասին:

1. ԵՄԷԿ-ԳՀԾՁԲ-19/142 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ՀԱՅՏԵՐ ՆԵՐԿԱՅԱՑՐԱԾ ԱՆՁԱՆՑ, ՎԵՐՋԻՆՆԵՐԻՍ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՀԱՅՏԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՎԱԾ ԳՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովի նախագահ Ալիսա Բաղդասարյանը նիստը հայտարարեց բացված և հրապարակեց գնման հայտով սահմանված՝ տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ծառայության գները:

Հ/Հ	Գնման առարկայի անվանումը	Գնման հայտով սահմանված ընդհանուր գինը
1.	Էլեկտրաէներգետիկական ոլորտի ֆինանսական առողջացման ծրագրի շրջանակում մասհանումներին կցված 8-րդ և 9-րդ ցուցանիշների ապահովման հավաստման ծառայություն	3 000 000

ԵՄԷԿ-ԳՀԾՁԲ-19/142 ծածկագրով գնման հարցման ընթացակարգի հայտերը բացվել են www.armeps.am կայքի միջոցով հրավերով սահմանված օրը և ժամին՝ 2019 թվականի սեպտեմբերի 30-ին, ժամը «17:45»-ին:

Հայտերի վերաբերյալ հարցումներ և պատասխաններ չեն գրանցվել:

Հրավերում փոփոխություններ չեն կատարվել, այլ հարցումներ և պատասխաններ չեն գրանցվել:

ԵՄԷԿ-ԳՀԾՁԲ-19/142 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին մասնակցելու հայտ է ներկայացրել հետևյալ անձը /այսուհետ՝ նաև մասնակիցը/.

Հ/Հ	Մասնակցի անվանում	Հասցեներ	Էլ. փոստ
1	Ֆ/Ա Մադոյան Թորգոմ	Նազարբեկյան 25, բն. 46	tmadoyan@gmail.com

Հանձնաժողովն արձանագրեց, որ՝

• Մասնակիցը հայտը կազմել և ներկայացրել է ԵՔԷԿ-ԳՀԾՁԲ-19/142 ծածկագրով գնման ընթացակարգի /այսուհետ՝ ընթացակարգ/ հրավերի /այսուհետ՝ հրավեր/ պահանջներին համապատասխան.

• Մասնակցի կողմից ներկայացված հայտում առկա են հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը, բացառությամբ բացակայում է հրավերով սահմանված գնային առաջարկին կցվող Հավելված 2.1-ը, որը պարտադիր լրացվում և կցվում է Հավելված 2-ին.

• Մասնակցի կողմից ներկայացված հայտում ներառված փաստաթղթերը չեն համապատասխանում հրավերով սահմանված վավերապայմաններին, մասնավորապես՝ մասնակցի կողմից ներկայացված հայտում առկա Դիմում N1-ում լրացված չէ իրական շահառուների մասին տեղեկատվությունը և 3-րդ կետով սահմանված աշխատակիցների քանակը, ինչպես նաև մասնակցի կողմից ներկայացված գնային առաջարկում բացակայում է մասնակցի անվանումը:

Հանձնաժողովի նախագահը հայտարարեց հայտեր ներկայացրած մասնակիցների գնային առաջարկները՝ հիմք ընդունելով տառերով գրվածը.

Մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկների և մասնակիցների զբաղեցրած տեղերի վերաբերյալ տեղեկատվությունը ներառված է ստորև ներկայացված աղյուսակում (այսուհետ՝ Աղյուսակ):

(ՀՀ դրամ)

Չափաբաժնի համարը	Մասնակցի		Մասնակիցների առաջարկած գները՝	
	Զբաղեցրած տեղ	Անվանում	Արժեք	Ընդհանուր գին
1	-	Ֆ/Ա Մադոյան Թորգոմ	3 000 000	3 000 000

Որոշվեց՝

• Ալիսա Բաղդասարյանի կողմից ներկայացված տեղեկատվությունն ընդունել ի գիտություն.

• Նիստը կասեցնել մեկ աշխատանքային օրով:

• Տիրան Լաճիկյանին՝ ծանուցել Ֆ/Ա Մադոյան Թորգոմին շտկել արձանագրված անհամապատասխանությունը 1 աշխատանքային օրվա ընթացքում:

Կողմ՝ 4
Դեմ՝ 0

Հանձնաժողովն արձանագրեց, որ

- Ֆ/Ա Մադոյան Թորգոմը սահմանված ժամկետում չի շտկել անհամապատասխանությունը:

Որոշվեց՝

1. Ֆ/Ա Մադոյան Թորգոմի կողմից ներկայացված հայտը ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով գնահատել անբավարար և մերժել:
2. Ընթացակարգը հայտարարել չկայացած, և հաստատել «ԵՋԷԿ-ԳՀԾՁԲ-19/142 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին» հայտարարության տեքստը՝ համաձայն հավելվածի:

Կողմ՝ 4
Դեմ՝ 0

2. ԱՌԱՋԻՆ /ԵՎ ՀԱՋՈՐԴԱԲԱՐ ՏԵՂԵՐ/ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐ ՈՐՈՇԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հարցը հանվել է:

Կողմ՝ 4
Դեմ՝ 0

3. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՀԱՋՈՐԴ ՆԻՍՏԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՕՐՎԱ ԵՎ ԺԱՄԻ ՄԱՍԻՆ

Հարցը հանվել է:

Կողմ՝ 4
Դեմ՝ 0

Հանձնաժողովի նախագահ՝

Ա. Բաղդասարյան _____

Հանձնաժողովի անդամներ՝

Ա. Սերոբյան _____

Շ. Տոնապետյան _____

Ա. Պետրոսյան _____

Հանձնաժողովի քարտուղար՝

Տ. Լաճիկյան _____